ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

NON COMMERCIAL STATE ORGANIZATION
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan
Tel. +37410 527081, fax: +37410 569281
e-mail: academy@sci.am

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, 24
Հեռ. +37410 527081,
Ֆաքս +37410 569281
e-mail academy@sci.am

0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24,
Тел. +37410 527081, факс: +37410 569281
эл.почта: academy@sci.am

«03» 05 2010 թ.
№ 24-01/194

«Հայկազեան հայագիտական հանդէսի» խմբագրությանը

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և հայագիտության ու հասարակական գիտությունների բաժանմունքը խորին գոհունակությամբ և բարձր գնահատանքով շնորհավորում են «Հայկազեան հայագիտական հանդէսի» հիմնադրման 40-ամյակը և հոբելյանական 30-րդ հատորի լույսընծայումը:

Հայագիտական կենտրոնների համար արդեն օրինաչափ է դարձել յուրաքանչյուր տարի «Հայկազեան հայագիտական հանդէսի» նոր հատորի ստացումը՝ մշտապես հարուստ բովանդակությամբ ու ամեն անգամ աչք շոյող արտաքին նոր երանգավորմամբ: Հանդէսի՝ ինչպես գրական հայերենի զույգ ճյուղերով, այնպես էլ միջազգային այլ լեզուներով հրատարակած նյութերի հայագիտական թեմատիկ լայն ծիրը՝ հնագիտությունից մինչև համացանցային մշակույթ, և հրապարակված նյութերի բարձրությունն ու հրատապությունը բացառիկ նշանակություն ունեն հայագիտության ասպարեզում: Եվ մենք մեր բարձր գնահատականի խոսքն ենք ուղղում Հանդեսի աշխատակիցներին, որոնց անսահման նվիրումի շնորհիվ Հանդէսն այսօր դարձել է հայագիտության զարգացման գրավականներից մեկը:

«Հայկազեան հայագիտական հանդէսի» զույգ հոբելյանների առիթով Հանդէսի աշխատակազմին մաղթում ենք աննկուն եռանդ, իսկ Հանդէսին՝ հարատևություն՝ հայագիտությունը կենսունակ պահելու առաքելությամբ:

ՀՀԳԱԱ նախագահ
ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյան

ՀՀԳԱԱ ՀՀԳԲ ակադեմիկոս քարտուղար
ակադեմիկոս Վլադիմիր Թարխանդարյան